ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» նոյեմբերի 2019 թվականի N 65-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 9՝ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 9՝ արտահերթ նիստի օրակարգը՝

1) Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 61-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

2) Ջրվեժ համայնքի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին:

3) Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

4) Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 59-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

5) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	կողմ (8)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՋՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» նոյեմբերի 2019 թվականի N 66-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի «Ջրվեժ համայնքի սեփականություն համարվող հողամասերից 2019 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարման առաջարկվող հողամասերի ցուցակը հաստատելու մասին» N 61-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) որոշմամբ հաստատված աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 50-ից 58-րդ տողերով.

50	Ջրվեժ համայնք, Ձորաղբյուր գյուղ 9-րդ փողոց, թիվ 12/1 07-042-0373-0007	0.03791	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	1800000
51	Ջրվեժ համայնք, Ձորաղբյուր գյուղ Այգեգործական զանգված 7/1 07-042-0217-0034	0.04228	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	2000000
52	Ջրվեժ համայնք, Ձորաղբյուր գյուղ 07-042-0406-0017	0.1208	գյուղատնտեսական վարելահող	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	ջրովի IV կարգ	չկա	300000
53	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 07-030-0111-0164	2.83715	գյուղատնտեսական այլ	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	այլ հողատեսք	չկա	1700000
54	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 07-030-0111-0165	1.41985	գյուղատնտեսական այլ	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	այլ հողատեսք	չկա	850000
55	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 07-030-0111-ից	0.56603	գյուղատնտեսական այլ	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	այլ հողատեսք	չկա	340000
56	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 07-030-0111-ից	0.65507	գյուղատնտեսական այլ	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	այլ հողատեսք	չկա	400000
57	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 07-057-0368-0012	5.0	գյուղատնտեսական այլ	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	այլ հողատեսք	չկա	5500000
58	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 16-րդ փողոց, թիվ 28 07-057-0361-0044-ից	1.99627	բնակավայրի հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	կան*	չկա	-	չկա	91000000

* Արգելվում են բնակելի տների, դպրոցների, նախադպրոցական, առողջապահական և հասարակական այլ շենքերի ու հանգստի գոտիների կառուցումը:

	կողմ (8)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» նոյեմբերի 2019 թվականի N 67-Ն

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 41.2)-րդ կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքի վարչական տարածքում արգելել սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայումը բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում:

2. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները կարող են գտնվել անհատական բնակելի տներից նվազագույնը 100 մ հեռավորության վրա:

3. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները կարող են գտնվել սույն որոշման 2-րդ կետում նշված անհատական բնակելի տներից մինչև 100 մետր հեռավորության վրա, եթե առկա է դրանց սեփականատերերի գրավոր համաձայնությունը:

4. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտներին գործունեության թույլտվությունը տալիս է Ջրվեժ համայնքի ղեկավարը՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքի վճարման անդորրագրի հիման վրա:

5. Առանց թույլտվության սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտներին գործունեության իրականացումը առաջացնում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

	կողմ (8)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» նոյեմբերի 2019 թվականի N 68-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով այն, որ 2019 թվականին համայնքապետարանը ձեռք է բերել գույք, որի արդյունքում համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվել են համապատասխան փոփոխություններ, համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

	կողմ (8)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՋՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 12
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2019 թվականի
նոյեմբերի 12-ի N 68-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(Հիմնական միջոցների գույքագրման ցուցակ N 01, Ձև Գ-4)

Հ/Հ	Հիմնական միջոցի անվանումը և համառոտ բնութագիրը	Թողարկման (կառուցման) տարեթիվը	Ձեռքբերման տարեթիվը	Համարը		Առկայությունը		Նշումներ
				Գույքային	Գործարանային	Փաստացի (քանակ)	Հաշվապահական տվյալներով (քանակ)	
1	2	3	4	5	6	7	8	9
37	Լուսավորման համակարգ	2019	2019	00417		1	1	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» նոյեմբերի 2019 թվականի N 69-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 59-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 59-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 1 և N 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն N 1 և N 2 հավելվածների,

2) առաջարկել Ջրվեժ համայնքի ղեկավարին՝ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

	կողմ (8)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 12
գ. Ջրվեժ

Հավելված N 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2019 թվականի
նոյեմբերի 12-ի N 69-Ա որոշման

«Հավելված N 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2018 թվականի
դեկտեմբերի 17-ի N 59-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին:»

Հավելված N 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2019 թվականի
նոյեմբերի 12-ի N 69-Ա որոշման

«Հավելված N 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2018 թվականի
դեկտեմբերի 17-ի N 59-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների քանակը՝ 28

Հ/հ	Հաստիքի անվանումը	Պաշտոնի ծածկագիր	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափ (ՀՀ դրամ)	Հավելում (ՀՀ դրամ)	Հավելա-վճար (ՀՀ դրամ)	Աշխատա-վարձի չափը (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6	7	8
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
1	Համայնքի ղեկավար		1	400000			400000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	270000			270000
	ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
3	Համայնքի ղեկավարի օգնական		1	180000			180000
	ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
4	Վարչական ղեկավար		1	250000			250000
5	Վարչական ղեկավար		1	250000			250000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔՆԵՐ						
6	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	300000		30000	330000
	Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին						
7	բաժնի պետ	2.1-1	1	270000		27000	297000
8	բաժնի գլխավոր մասնագետ	2.3-1	1	225000		15750	240750
9	բաժնի գլխավոր մասնագետ	2.3-2	1	225000		15750	240750
10	բաժնի առաջատար մասնագետ	3.1-1	1	200000		14000	214000
11	բաժնի առաջատար մասնագետ	3.1-2	1	200000			200000
12	բաժնի 1-ին կարգի մասնագետ	3.2-1	1	180000		18000	198000
13	***բաժնի 1-ին կարգի մասնագետ***		***1***	***180000***			***180000***
14	բաժնի 2-րդ կարգի մասնագետ	3.3-1	1	160000		16000	176000
15	բաժնի 2-րդ կարգի մասնագետ	3.3-2	1	160000		16000	176000

Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)							
16	գլխավոր մասնագետ	2.3-3	1	225000			225000
17	գլխավոր մասնագետ	2.3-4	1	225000			225000
18	առաջատար մասնագետ	3.1-3	1	200000			200000
19	առաջատար մասնագետ	3.1-4	1	200000			200000
20	առաջատար մասնագետ	3.1-5	1	200000			200000
21	1-ին կարգի մասնագետ	3.2-2	1	180000			180000
22	1-ին կարգի մասնագետ	3.2-3	1	180000			180000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ							
23	Գործավար		1	160000			160000
24	Գործավար		1	160000			160000
25	Վարորդ		1	125000			125000
26	Հավաքարար		1	125000			125000
27	Հավաքարար		1	80000			80000
28	Հավաքարար		1	80000			80000
	ԸՆԴԱՄԵՆԸ		***28***	***5590000***		***152500***	***5742500»***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» նոյեմբերի 2019 թվականի N 70-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի պահանջներով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2019 թվականի նոյեմբերի 7-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում գտնվող 07-057-0122-0030 կադաստրային համարի 785,1 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում գտնվող 07-057-0122-0030 կադաստրային համարի 785,1 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի նկատմամբ:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

	կողմ (8)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 12
գ. Ջրվեժ